ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին) 2018 թվականի մարտի 6-ից 8-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Զարմինե Զեյթունցյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Բեռլին (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), 2018 թվականի մարտի 6-ից 8-ը

4. **Գործուղման նպատակը՝**

«ԱյԹիԲի Բեռլին» միջազգային ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպվող Մետաքսի ճանապարհի երկրների նախարարական 8-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի ընթացքում քննարկումներ են ծավալվել Մետաքսի ճանապարհին զբոսաշրջության կայուն զարգացման նոր հնարավորությունների շուրջ, հատկապես ընդգծելով այն փաստը, որ պատմության առաջին միջմայրցամաքային մայրուղին նպաստելու է ոչ միայն զբոսաշրջության զարգացմանը, այլև առևտրի, գիտության, արվեստի, մշակույթի ու գաղափարների ներթափանցմանն իր տարածքով ձգվող պետություններում:

Ծրագիրն ուղղված է անդրսահմանային համագործակցությանն ու նպաստելու է, որ տարբեր երկրների մարդիկ փոխշահավետ համագործակցեն:

Մետաքսի ճանապարհի երկրների նախարարական 8-րդ հանդիպման շրջանակներում քննարկվել են նաև նոր և արդեն իսկ գոյություն ունեցող ծրագրեր՝ ուղղված Մետաքսի ճանապարհի շրջանակներում կայուն զբոսաշրջության զարգացմանը, մասնավորապես՝ «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի մշակման և խթանման ծրագիրը:

Հանդիպման շրջանակներում անցկացվել է նախարարական կլոր-սեղան քննարկում, որի ընթացքում մասնակիցները կիսվել են Մետաքսի ճանապարհը 21-րդ դարի կարևորագույն անդրազգային զբոսաշրջային երթուղի դարձնելուն ուղղված մտքերով ու ռազմավորություններով:

Միջոցառման ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը հանդես է եկել ելույթով, նշելով մասնակիցներին, որ Հայաստանը մեծ պատասխանատվությամբ է մոտենում 2017թ. մարտին Վալենսիայում Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության հերթական համաժողովի ժամանակ, որտեղ քննարկվում էր «Զբոսաշրջության մետաքսի ճանապարհ» ծրագիրը, մեր պատվիրակության Մետաքսի ճանապարհին գտնվող երկրներում գինու զբոսաշրջությունը զարգացնելու ծրագիրն իրականացնելու նախաձեռնությանը, որի առաջնորդությունը վերապահվել էր Հայաստանին:

Նա իր ելույթում նշել, որ մշակվել է «Մետաքսի ճանապարհի գինու հետք» հայեցակարգը, ապա ավելացրել է , որ այս փուլում առաջին քայլը, որը մենք նախատեսում ենք, այն է, որ հայեցակարգը հաստատվի մասնակից պետությունների կողմից, որից հետո կձևավորվի աշխատանքային խումբ և կմշակվի ամբողջական ծրագրային ռազմավարությունը:

Այցի ընթացում հանդիպումներ են տեղի ունեցել հետևյալ անձանց հետ՝

- ՄԱԿ ՀՀԿ գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլի,

- Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի փոխնախարար Միխայիլ Պորտնոյ
- Սևծովյան տնտեսական համագործակցության մշտական միջազգային քարտուղար Միքայել Քրիստիդես
- PTAK Warsaw expo-ի փոխնախագահ, ընդլայնման և զարգացման վարչության պետ Կազիմիր Ցվիկլա
- Հունաստանի զբոսաշրջության նախարարի խորհրդական Միքայել Անգելոպոուլոս

6. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյան

7. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13.03.2018